ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» մարտի 2012թ. **N ----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՎԱՀԱԳՆԻ» ԹԱՂԱՄԱՍԻ ՆԵՐԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի h.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ կետերով և 3-րդ բաժնի կանոններով, ինչպես նաև հաշվի առնելով «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի 24.01.2012թ. h.06 գրությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Անվանակոչել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի «Վահագնի» թաղամասի ներթաղամասային փողոցներն ըստ հետևյալ անվանումների՝

Թաղամասի գլխավոր փողոց	-	Արարատի փողոց
1-ին տեղամաս	-	Արա լեռ փողոց
2-րդ և 13-րդ տեղամաս	-	Ներսես Շնորհալու փողոց
		Սիամանթոյի փողոց
		Ռուբեն Զարդարյան փողոց
		Ռուբեն Սևակի փողոց
		Լևոն Շանթի փողոց
		Հովհաննես Երզնկացու փողոց
		Ղևոնդ Ալիշանի փողոց
		Գրիգոր Տաթևացու փողոց

3-րդ տեղամաս	-Արաքսի փողոց Քասախի փողոց Արփայի փողոց Վեդիի փողոց Մեղրիի փողոց Որոտանի փողոց Դեբեդի փողոց
4-րդ և 5-րդ տեղամաս	-Հատիսի փողոց Բազումի փողոց Սիփանի փողոց Նեմրութի փողոց Վարագայի փողոց Գանձասարի փողոց Գեղամա լեռների փողոց

2. Ուժը կորցրած ճանաչել Աջափնյակ համայնքի ավագանու 10.11.2005թ. հ.9 և հ.10 որոշումները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՎԱՀԱԳՆԻ» ԹԱՂԱՄԱՍԻ ՆԵՐԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում «Հովնանյան Ինտերնեյշնլ» ՍՊԸ-ի 24.01.2012թ. հ.06 գրությունը:

«Վահագնի» թաղամասը զբաղեցնում է 163հա տարածք:

«Վահագնի» թաղամասի նախագծումն ու կառուցումը մեկնարկել է 1990թվականների վերջին:

Համաձայն նախագծի՝ թաղամասում նախատեսվում է կառուցել 700 առանձնատուն և 2300 բնակարան:

Թաղամասը պայմանականորեն բաժանված է տեղամասերի:

Թաղամասի բնակելի միավորները դասավորված են կանոնավոր շարքերով, հետևապես ըստ տեղամասերի տների համարային կարգը կարող է կրկնվել:

Ելնելով վերոնշվածից անհարժեշտություն է առաջացել տեղամասերն առանձնացնել՝ ըստ անվանակիր փողոցների:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՎԱՀԱԳՆԻ» ԹԱՂԱՄԱՍԻ ՆԵՐԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևան քաղաքի «Վահագնի» թաղամասի ներթաղամասային փողոցներն անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՎԱՀԱԳՆԻ» ԹԱՂԱՄԱՍԻ ՆԵՐԹԱՂԱՄԱՍԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

««Երևան քաղաքի «Վահագնի» թաղամասի ներթաղամասային փողոցներն անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ/ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ